

Ներն հետզհետէ կամայականօրէն ընդարձակելու և ընդհանրապէս վրաց լեզուի և վրացի տարրի գէմ մղած հալածանքի մէջ:

Որոշուեց. Մինդրէլիայի հոգեոր դպրոցի տեսուչ նաբրէկովին յայտնել ամըողջ Մինդրէլիայի հոգեորականութեան կողմից գդգռհութիւն և խնդրել սրբազան Աէօնիդից, որ յիշեալ պարոնին անմիջապէս հեռացնելու համար միջոցների ձեռնարկուի՝ որպէս դպրոցին տմեն կողմից վնասակար մի անձի և նկատի ունենալով հոգեորականութեան ներկայ չքաւոր կացութիւնը, այն եկեղեցիների միաբաններին, որոնք 400 ռուբլուց պակաս ուռնիկ են ստանում, նպաստ տալ մոմի թեմական ձուլաբանից և թեմական հոգեոր հոգեարձութիւնից, եթէ այդ հնարաւոր կլինի: 2) և նկատի առնելով ներկայ խովվութիւնները, որոնք տարածուել են պետութեան շատ տեղերում և սպառնում են հայրենիքին, եկեղեցու և հոգեորականութեան շատ և շատ շահերին, միանալով հայրենիքի ըոլոր քարեկամների հետ, պահանջել, որ շուտով հրաւերուի օրէնսդիր ժողով՝ ուղիղ, ընդհանուր, հաւատար և գաղանի քուէարկութեամբ՝ որպէս լաւագոյն պայման պետութեան կուլտուրական զարդարման և վրդովուած ուռւս ժողովրդին հանգստացնելու. որպէս արմատական միջոց՝ տալ ազատութիւն խօսքի, մամուլի, ժողովների և ընկերակցութեանց և ազատել եկեղեցու ոպասաւորներին քաղաքական նպատակներին ծառայելու պարտաւորութիւնից»:

— Մեր խորին համակրութիւնն ենք յայտնում Մինդրէլիայի հոգեորականների համաժողովին, սիրով արձանագրում ենք նրանց քաղացիական գեղեցիկ և համարձակ ընթացքը և ճշմարիտ հայրենասիրութիւնը՝ բառիս լաւագոյն իմաստով և ցանկանում ենք օր առաջ իրագործած տեսնել նրանց որոշումներն ու գեղեցիկ փափագը:

Սոխումի վրաց եպիսկոպոսական աթոռը և Քութայիսում փակուած հոգեոր սեմինարիան փոխադրում են նովօրոսիսկ:

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Պիոս X պապի ընդհանրականը իտալական եպիսկոպոսներին «կաթոլիկական գործունէութեան մասին»:

Քաղաքական և հասարակական կեանքի նշանաւոր երևոյթ պէտք է համարել Պիոս X պապի ընդհանրականը իտալական

եպիսկոպոսներին, որ նա հրատարակեց յաւնիսի 11-ին «կաթո-
լիկական գործունէութեան մասին» (azione cattolica): «Կաթոլիկական
գործունէութեան տակ հասկացւում է կոթոլիկների ընդհանուր
գործունէութիւնը, որի միջոցաւ իրադորժուում է եկեղեցու
կոչումը քաղաքակրթութեան առաջարկում: Այն բոլորը, ինչ որ
կաթոլիկներն են անում, որպէս զի պատի առածի համաձայն
կուի մզեն հակաքրիստոնէական քաղաքակրթութեան դէմ և
ուղղեն գրանից առաջ եկած ծանր պակառութիւնները և Քրիս-
տոնին գարձնեն ընտանիքը, զպը որը, հասարակութիւնը, վերա-
կանգնեն մարդկացին հեղինակութիւնը, որպէս առուածային
ներկայացուցիչ, հոգ տանեն ժողովրդի շահերի պաշտպանու-
թեան, մանաւանդ բանուոր և երկրագործ դառակարգերին՝ ոչ
թէ միայն կրօնական սփոփանք տալով նրանց, այլ և սրբելով
նրանց արցունքները, թեթեացնելով նրանց տանջանքը՝ բարւո-
քել նրանց տնտեսական կացութիւնը, ջանալ, որ տեղի ունենայ
արդար օրէնսդրութիւն, իւրաքանչիւր գործում պաշտպանել
Աստուծոյ օրէնքներն և նրանցից ոչ պակաս եկեղեցու սրբադան
իրաւունքները: Իւր ընդհանրականում պապը տալիս է այդ
գործունէութեան գրական չափեր: Նա բարդաբանում է, որ
«կաթոլիկական գործունէութեան» (azione) ներքին ձեւ՝ «առու-
քելութիւն է ի պատիւ և ի փառու Քրիստոսի»—անփոփոխ է և
միայն ժամանակի պահանջների համաձայն փոխում են նրա
արտաքին ձեւը, ինչպէս և ինքը՝ եկեղեցին, անփոփոխ պահ-
պանելով հաւատն ու բարօյականութիւնը, զարմանալի ընդու-
նակութեամբ յարմարուում է քաղաքական կեանքի պայմաննե-
րին: Գործունէութեան ներկայ ձեւը մատնանիշ է արուած Աւոն
XIII պապի «Rerum novarum» կոչուած ընդհանրականում և
կայանում է սօցիալական խնդիրը բըհստոնէական սկզբունքնե-
րով լուծելու մէջ: Պիոս X պապն իւր կողմից հրահանգներ է
տալիս այդ նպատակին հասնելու գործը հեշտութեամբ վճռելու-
վերաբերութեամբ: Նա առաջարկում է կազմակերպել ժողովր-
դական դաշնագրութիւն, որը կարողանայ համախմբել բոլոր
դասակարգերի կաթոլիկներին սօցիալական կազմակերպութեան
մի և նոյն վարդապետութեան և քարոզի շուրջը և զանազան
սօցիալական պրօբլէմը վճռելու համար գոյութիւն ունեցող
տնտեսական հիմնարկութիւններն ի մի համախմբէ: Բայց որ
աւելի նշանաւոր է՝ պապը զգալապէս ընդարձակում է այն
միջոցների սահմանը, որոնք կարող են ծառայել յիշեալ նպա-
տակին: Նա պահանջում է վարել այդ գործունէութիւնը այն
բոլոր գրական միջոցներով, որպէսիք ներկայացնում է ընկեր-

վարական և տնտեսական դիտութեանց ժամանակակից յառաջագիմութիւնը, ուրեշ երկերների փորձը, քաղաքական կեանքի պայմանները, ոլետական կեանքը և մասնաւորապէս՝ օդառւել բոլոր քաղաքացիական իրաւունքներով, որպիսիք ընծայում է մարդկանց ժամանակակից պետական կազմակերպութիւնը, երկրի պետական քաղաքական կեանքին անմիջապէս մասնակցելու իրաւունքը, որով ժողովուրդը ներկայանում է տեղական օրէնսդրական ժողովներում:

«Նատ նշանաւոր պատճառներ հարկադրում են մեղ, պատուարժան եղբայրներ, չը ոչնչացնել մեր երջանկայիշատակ նախորդի դրած այն արգելքը, որով կաթոլիկներին արգելում է մասնակցել Խոտիկայի օրէնսդրական գործերին։ Բայց, միւս նոյնքան կարեւոր պատճառներ, որոնք կապուած են հասարակութեան բարձրագոյն բարեփի հետ, որը յամենայն դէպո պէտք է պահպանուի, կարող են պահանջել, որ մասնաւոր դէպերը ուղացուի այդ արգելքը, մանաւանդ երբ գուք՝ գերազատիւ եղբարք, այդ կարեւոր կը գատէք յօգուտ ձեզ հաւատացած եկեղեցիների և անձանց։ այդպիսի դէպերում կարող էք թոյլաւութիւն հայցել»։

Թէև ոչ անպայման, բայց բանալով այդպիսով Խոտիկայի կաթոլիկների առաջ քաղաքական գործունէութեան ասպարէզը, որն այդքան ժամանակ արգելուած էր, պապը կոչ է անում խելացի և լուրջ կերպով պատրաստուել այդ գործունէութեան և կազմակերպուել, սպասելով հրաւերի ժամին և յիշեցնում է այն սկզբունքները, որոնցով պարտաւոր են այն տեղ զեկավարուել։

«Կաթոլիկը իւրաքանչիւր դործում ամենից առաջ պէտք է ճշմարիտ կաթոլիկ երեայ հասարակական պարտաւորութեանց կատարման ձեռնարկելիս՝ պէտք է կատարի այն հաստատուն և մշտական դիտաւորութեամբ, բոլոր ոյժերով աջակցելու հայրենիքի ընկերվարական և տնտեսական բարօրութեան՝ քրիստոնէական քաղաքակրթութեան կանոնների համաձայն և միացած պաշտպանելու եկեղեցու բարձր շահերը, որոնք մի և նոյն ժամանակ կրօնի և առաքինութեան շահերն են։

Պիոս X պապը խրախուսում է նուե այն մասնաւոր ձեռնարկութիւնները, որոնք ժողովրդի բարօրութեան համար են, որոշում է քահանայից պարտաւորութիւնը և չի արգելում նրանց այդ գործերին մասնակցել յօգուտ ժողովրդի և եկեղեցու։ Պապի ընդհանընթականը քաղաքական խոշոր երեսյթ է և դրանով վերացւում է 25 տարի գոյութիւն ունեցող՝ քաղաքական գործերին մասնակցելու արգելքն Խոտիկայում։